ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/79

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդարանը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. թիվ 03/26-3/23861-17 գրությամբ «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00102387) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 19.12.2017թ. թիվ 680 գրության հիման վրա, 20.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն 19.12.2017թ. թիվ 680 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի միջև 14.11.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի կողմից 09.12.2017թ. մատակարարվել է 140 կգ մեղր, որի որակը չի համապատասխանել Պայմանագրով նախատեսված որակին: Ընթացակարգի գնման հայտը նախագծած ներկայացուցիչների կողմից տրված բացասական եզրակացությունը և պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը (որը մեր կողմից չի հաստատվել) Պայմանագրով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգով ուղարկվել է «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետով ուղակվել է ծանուցում՝ առաջարկելով եռօրյա ժամկետում Ապրանքը փոխարինել Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով և վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանք:

Սահմանված եռօրյա ժամկետում «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի կողմից անպատշաճ որակի ապրանքը չի փոխարինվել Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով, որի պատճառով, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 կետով՝ մեր կողմից միակողմանի մասնակի լուծվել է ՀՀ ԱՆ ««Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի միջև 14.11.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագիրը՝ հավելված 1-ի 4-րդ չափաբաժնով՝ «մեղր բնական» ապրանքատեսակի մասով:

Սահմանվել է Պայմանագրով նախատեսված տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 տոկոսի չափով:

«Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ից 18.12.2017թ. ստացել ենք գրություն այն մասին, որ Ընկերությունը չի կարող մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող որակի մեղր»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Խաչիկ Կիրակոսյանը:

3. <u>«Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը 21.12.2017թ. դիմել է «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. թիվ 03/26-3/23861-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/79 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2017թ. թիվ 03/26-3/23861-17 գրությունը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն 19.12.2017թ. թիվ 680 գրությունը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի միջև 14.11.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագիրը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 13.12.2017թ. Ընկերությանն ուղված գրությունը, «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի 18.12.2017թ. գրությունը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի միջև 14.11.2017թ. կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 2.1.7.1 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ Ընկերությունը 2017թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին պարտավորվել է մատակարարել 728 կգ «մեղր բնական» ապրանքատեսակը՝ հետևյալ տեխնիկական բնութագրով. «բնական մեղր՝ ծաղկային կամ մեղրացողային, առանց մեխանիկական խառնուրդների և խմորման, ջրի զանգվածային բաժինը՝ 18,5%-ից ոչ ավելի, սախարոզի զանգվածային մասը (ըստ բացարձակ չոր նյութի)՝ 5,5%-ից ոչ ավելի, ՀՍ 228-2003, փաթեթավորումը՝ ՀՍ 228-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մինչև 1,5 կգ տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80%: Ապրանքը մատակարարվի ամիսը 2 անգամ»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման հայտը նախագծած ներկայացուցիչների կողմից 12.12.2017թ. կազմված՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված բացասական եզրակացության համաձայն՝ «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի կողմից 09.12.2017թ. մատակարարված 140 կգ մեղրը չի համապատասխանել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Մասնավորապես, արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Պայմանագրի հավելված 1-ով «արտադրողը» սահմանվել է «Հայրենյաց Բարիքներ» ՍՊԸ-ն, իսկ փաստացի մատակարարված մեղրը արտադրված է «Ալեն-Հարուդ» ՍՊԸ-ի կողմից:

2. Պայմանագրի հավելված 1-ով ապրանքի պիտանելիության մնացորդային ժամկետը սահմանվել է ոչ պակաս քան 80%, սակայն փաստացի մատակարարված մեղրի պիտանելիության մնացորդային ժամկետը կազմում է 53 %:

3. Պայմանագրի հավելված 1-ով ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է «մեղր բնական», սակայն փաստացի մատակարարված ապրանքային անվանումը մակնշված է «մեղր», որի պատճառով էլ պարզ չէ, մեղրը բնական է, թե՝ ոչ:

4. Խախտվել է «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջը, որով սահմանված է, որ «Սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի մակնշումը պետք է ներառի՝ բաղադրությունը.....» մինչդեռ մատակարարված մեղրի մակնշման վրա բաղադրության վերաբերյալ տվյալները բացակայում են: Նշված պատճառով հնարավոր չէ մատակարարված մեղրի բաղադրությունը համեմատել պայմանագրով սահմանված բաղադրության հետ:

Խորհրդին է ներկայացվել նաև նշված ապրանքատեսակի լաբորատոր փորձարկման N4456 արձանագրությունը, ըստ որի «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի կողմից մատակարարված մեղրի ինվերտ շաքարային զանգվածը, սախարոզայի զանգվածային մասը և դիաստազային ակտիվությունը չեն համապատասխանել ՀՍՏ 228-2003 սատնդարտներին:

Պատվիրատուն «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին ուղղված 13.12.2017թ. թիվ 673 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից 09.12.2017թ. մատակարարված 140 կգ մեղրը չի համապատասխանել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, ինչի արդյունքում Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման հայտը նախագծած ներկայացուցիչների կողմից տրվել է բացասական եզրակացության և Պայմանագրի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուի կողմից չի հաստատվել: Միաժամանակ, Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը

եռօրյա ժամկետում Ապրանքը փոխարինել Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով և վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանք:

Ի պատասխան Պատվիրատուի վերը նշված գրության, «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ն 18.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի միջև 14.11.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագրով Ընկերությունը պարտավորվել էր մատակարարել 728 կգ մեղր, սակայն Ընկերության կողմից հայտով բնական մեղրի փոխարեն թյուրիմացաբար ներկայացվել էր արհեստական մեղրի համար նախատեսված գնային առաջարկը, որով և կնքվել է հիշյալ պայմանագիրը: Հայցելով Պատվիրատուի ներողամտությունը՝ Ընկերությունը հայտնել է նաև, որ չի կարող մատակարարել բնական մեղրի Պայմանագրով նախատեսված չափաքանակը նույն Պայմանագրով սահմանված գնով:

Ընկերությանն ուղղված 18.12.2017թ. թիվ 679 գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է վերջինիս, որ ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 կետով՝ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի միջև 14.11.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագիրը «մեղր բնական» ապրանքատեսակի մասով Պատվիրատուի կողմից միակողմանի մասնակի լուծվել է, քանի որ սահմանված եռօրյա ժամկետում «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի կողմից անպատշաճ որակի ապրանքը չի փոխարինվել Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Խորհուրդն արձանագրում է, որ «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Խորհուրդը գտնում է, որ պայմանագրով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող բնութագրով ապրանք մատակարարելով՝ Ընկերությունը խախտել է ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ի միջև 14.11.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/1-1 պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.12.2017թ. «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00102387) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Սվետլանա Աթանեսյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**